ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-Ի՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 29.05.2009Թ. ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԹԻՎ 4-145 ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի, աշխատակարգային նիստում քննելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228 հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի դիմումը քննության ընդունելու մասին հարցը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ն դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228 հոդվածի 2-րդ մասի դրույթների սահմանադրականությունը:

2. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետում նախատեսված է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկվում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը, մինչդեռ դիմումում վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228 հոդվածի 2-րդ մասի դրույթները վերջնական դատական ակտով չեն կիրառվել դիմողի նկատմամբ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69 հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի դիմումի քննության ընդունումը մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՆԴԱՄ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

19 հունիսի 2009 թվականի
ՍԴԱՈ -55